ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ «ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-26/10

ք. Երևան «31» «03» 2026թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղար՝ Տիգրան Իգիթյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էլիքս» ՍՊ ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Ջանիկ Սևոյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության յուրաքանչյուր ամսվա գինը կազմում է 40,000 (քառասուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը: Յուրաքանչյուր տարվա համար կողմերի միջև կկնքվի համապատասխան համաձայնագիր՝ վճարման ժամանակացույցի հաստատման վերաբերյալ:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է անժամկետ, մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են __8__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	«Էլիքս» ՍՊԸ
Ք. Երևան, Արշակունյաց-63	ք.Արտաշատ Մարքսի 7ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ԱմերիաԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011175016	Հ/Հ 1570078901950200
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ՝04235445
ՔԿ ծառայության գլխավոր քարտուղար Տ. Իգիթյան	Գործադիր տնօրեն Ջ.Սևոյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն)

Հավելված N 1
«31» «03» 2026թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-26/10 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
							մատուցման	
հիրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	72211124/1	Պաշտոնական կայքի ծրագրային մշակման և սպասարկման ծառայություններ	**ՀՀ Քրեակատարողական ծառայության պաշտոնական կայքի ծրագրային մշակման և շարունակական սպասարկման ծառայություններ** Սույն տեխնիկական բնութագիրը վերաբերում է Կայքի սպասարկման աշխատանքների իրականացմանը: Աշխատանքների իրականացման նպատակն է ապահովել կայքի անխափան, արագ, անվտանգ և ժամանակակից պահանջներին համապատասխան աշխատանքը: Սպասարկման շրջանակներում իրականացվում են բոլոր անհրաժեշտ պարբերական, տեխնիկական և կանխարգելիչ միջոցառումները, որոնք ուղղված են կայքի բնականոն գործունեության պահպանմանը, սերվերային և բովանդակային օպտիմալացմանը, ինչպես նաև տեղեկատվական անվտանգության շարունակական բարձրացմանը: **Կատարվող աշխատանքների նկարագրություն**	ՀՀ դրամ	360000	1	ք.Երևան Արշակունյաց 63	2026թ. ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը ներառյալ

			1. Կայքի գործունեության ապահովում • Իրականացվում է կայքի աշխատանքի ընթացքում առաջացած տեխնիկական խափանումների և սխալների հայտնաբերում և շտկում՝ ներառյալ սերվերային մակարդակի, տվյալների բազայի կամ օգտատիրոջ միջերեսի մակարդակի խնդիրները: • Կատարվում է տեխնիկական միջամտություն՝ կայքի անխափան աշխատանքի շարունակականության համար: • Վերլուծվում են ծրագրային կոդերի և այլ սերվերային սկրիպտների սխալներ, տվյալների բազայի հարցումների հնարավոր անհամապատասխանություն՝ ուղղված կայքի արձագանքման բարձրացմանը: **2. Կայքի տեխնիկական թարմացումներ և օպտիմալացում** • Կայքի կառավարման համակարգի և համապատասխան գործիքակազմի պարբերական թարմացում՝ շաբաթական անվտանգության խոցելիությունների և ամսական՝ համակարգային բարելավումների շրջանակում: • Հնացած, չօգտագործվող կամ ոչ անհրաժեշտ մոդուլների կարգավորում կամ անջատում՝ կայքի արագագործությունը բարձրացնելու նպատակով: • Իրականացվում է կոդային բազայի և ֆայլային համակարգի պարբերական տեխնիկական վերանայում՝ թափոնային տարրերի հայտնաբերման և հանման նպատակով:					

			3. Տվյալների անվտանգություն և պահուստավորում • Իրականացվում է պարբերական պահուստավորում՝ ըստ նախապես հաստատված ժամանակացույցի՝ օրական, շաբաթական և ամսական կտրվածքով: • Ապահովվում է կրիտիկական պահուստային պատճենների պահպանում նաև արտաքին կրիչներում՝ տվյալների ամբողջականության երաշխավորման նպատակով: • Տրամադրվում է պահուստների վերականգնման հնարավորություն՝ մասնակի կամ ամբողջական ծավալով՝ առանց կայքի սերվերային աշխատանքի դադարեցման: **4. Անվտանգության մոնիթորինգ և տեխնիկական պաշտպանություն** • Իրականացվում է մուտքային վերահսկման մեխանիզմների մշտադիտարկում՝ ներառյալ 2FA նույնականացում, captcha համակարգ, login-limit, IP հիմնված սահմանափակումներ: • Տեխնիկական միջոցներով հայտնաբերվում և արգելափակվում են չհաստատված IP հասցեներից եկող հարցումներ կամ կրկնվող կասկածելի ակտիվություն: Արգելափակված հասցեները կարող են վերականգնվել ըստ անվտանգության վերահսկման արդյունքների: • Իրականացվում է SQL Injection, XSS և CSRF հարձակումների դեմ պաշտպանվածության ապահովում: Տեղադրվում և արդիականացվում է Web Application Firewall (WAF)՝ OWASP մակարդակի սպառնալիքների կանխարգելման նպատակով:					

			5. Սերվերային օպտիմալացում և արագագործության բարձրացում • Կայքի բեռնման արագության բարձրացման նպատակով իրականացվում են քեշավորման օպտիմալացման աշխատանքներ՝ Redis կամ Memcached հիմքով համակարգերի տեղակայմամբ կամ արդիականացմամբ: • Frequently-used տվյալների համար ներդրվում է object cache, իսկ փոփոխվող տվյալների դեպքում՝ քեշի վերահաշվարկման տրամաբանություն: • Իրականացվում է front-end օպտիմիզացում՝ ավելորդ բեռնվածության նվազեցման և SEO ինդեքսավորման արդյունավետության բարձրացման նպատակով: **6. Log-երի մոնիթորինգ և համակարգային վերլուծություն** • Իրականացվում է սերվերային log-երի պարբերական մաքրում և արխիվացում՝ պահեստային ծավալի կառավարումը ապահովելու նպատակով: • Կատարվում է համակարգային log-երի մշտադիտարկում՝ չարամիտ գործողությունների, սխալների կամ համակարգային խափանումների վաղաժամ հայտնաբերման համար: • Log-երի հիման վրա վերլուծվում են կրկնվող սխալները և ձեռնարկվում են կանխարգելիչ միջամտություններ: **7. Համապատասխանություն պետական ստանդարտներին և թվայնացման սկզբունքներին** • Կայքի կառուցվածքը և տեխնիկական լուծումները շարունակաբար					

			համապատասխանեցվում են ՀՀ պետական ծառայությունների թվայնացման սկզբունքներին և «Հենակետ» նախագծային համակարգի պահանջներին: • Իրականացվում են անհրաժեշտ տեխնիկական փոփոխություններ և աջակցություն՝ համահունչ պետական UI/UX կանոններին: • Աջակցություն է ցուցաբերվում Google Analytics, Tag Manager և այլ վերլուծական գործիքների կարգավորման և տեխնիկական աշխատունակության հարցերում: **8. Խորհրդատվություն և կապ պատվիրատուի հետ** • Սպասարկման աշխատանքների շրջանակում իրականացվում է տեխնիկական խորհրդատվություն կայքի պատասխանատու բաժնի աշխատակիցներին: • Կատարվում են անհրաժեշտ շտկումներ, ուղղումներ և թարմացումներ կայքի գործունեության ապահովման համար: **9. Վնասակար կոդերի կանխարգելման և չարամիտ ֆայլերի հայտնաբերման աշխատանքներ** • Կայքի անվտանգությունն ապահովելու նպատակով իրականացվում են պարբերական աշխատանքներ՝ վնասված կամ վարակված ֆայլերի հայտնաբերման, ախտորոշման և անհրաժեշտության դեպքում դրանց բուժման ուղղությամբ: Այդ աշխատանքները կատարվում են հետևյալ գործիքների հիման վրա. • **հակավիրուսային համակարգի միջոցով** իրականացվում է կայքի ֆայլային համակարգի սքանավորում, որի արդյունքում հայտնաբերված վնասված կամ կասկածելի					

			ֆայլերը ենթարկվում են վերլուծության: Անհրաժեշտության դեպքում իրականացվում է ֆայլերի ախտահանում կամ հեռացում՝ կայքի բնականոն աշխատանքը պահպանելու նպատակով: • պարբերաբար իրականացվում է աղբյուրային կոդի վերլուծություն՝ ուղղված չարտոնված սպամ սկրիպտերի կամ վնասակար ներդրված կոդերի հայտնաբերմանը: Նման դեպքերում իրականացվում է անհապաղ միջամտություն՝ կասկածելի հատվածների չեզոքացման և կայքի պաշտպանվածության մակարդակի բարձրացման նպատակով: **10. Պաշտոնական կայքի սպասարկման համապատասխանեցում ամպային տեղակայման պահանջներին** • Կայքի սպասարկման գործընթացի շրջանակում իրականացվում են նաև աշխատանքներ, որոնք ուղղված են ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «Ամպային տիրույթում տեղակայվող պաշտոնական կայքերի նկատմամբ անվտանգության նվազագույն պահանջների» ապահովմանը: Մասնավորապես, ○ սպասարկման գործընթացում հաշվի են առնվում նախապես սահմանված սահմանափակումները կապված տեղադրվող բովանդակության դասակարգման, տվյալների տարանջատման, կառավարման վահանակ մուտքի անվտանգության, պահուստավորման կազմակերպման և միջադեպերին արձագանքման հետ կապված կարգավորումների հետ: • Կայքի թարմացումների տեղակայում՝ նախապայման հանդիսացող փորձարկման (pre-live) միջավայրում և միայն հաջող փորձարկումից հետո՝ live տեղակայում,					

			• Կայքի ամբողջական վերականգնման սցենարի փորձարկում՝ խափանումների ժամանակ համապատասխան գործողությունների կատարման նպատակով, • Պաշտոնական կայքի աշխատունակության և անվտանգության նկատմամբ վերահսկողության ապահովում: Հաշվի առնելով Կայքի բեռնվածությունը, անվտանգությունը և տեխնիկական պահանջները, տրամադրվում է պրոֆեսիոնալ հոսթինգային միջավայր, որը նախատեսված է կայքի բարձր արդյունավետության, ծրագրային ինտեգրացիայի և անվտանգության ապահովման համար: Ծառայությունը ներառում է հոսթինգի տրամադրում, տվյալների կառավարման, բազմամակարդակ անվտանգության, օպտիմիզացիայի, պահուստավորման և վերահսկման ծառայություններ, ինչպես նաև տվյալների ստացման, մշակման, պահպանման, փոխանցման, այդ թվում ռեզերվային պատճենների ստեղծման և կառավարման ծառայություններ: Պարբերական ավտոմատ backup ամեն 3-րդ օրը և հասանելի վերջին 1 ամսվա համար: «SSL» հավաստագրի տրամադրում, սերվեր-հոսթինգային ծառայության ընթացքում: Ակտիվացված քեշավորում, CDN ծառայություններ և առաջին մակարդակի DDoS պաշտպանություն: Առանց DNS servers-ի փոփոխության, համապատասխան CloudDNS-ի ինտեգրում, ըստ այդմ SSL (Automated HTTPS), DNS պաշտպանություն (real IP թաքցվում է), HTTP/2 / HTTP/3 (բարձր կատարողականությամբ), Bot filtering և firewall հնարավորություններ (ակտիվացրած), Controle / Redirects (կիրառվող), Rate limiting / DDoS պաշտպանություն:					

			Համակարգային բեռնվածության բաշխում՝ կայքի կայունությունն ու արագ արձագանքը պահպանելու նպատակով: Պահպանվում են Pre-live և Live միջավայրեր: Բոլոր փոփոխությունները նախ փորձարկվում են pre-live միջավայրում և հաստատումից հետո տեղափոխվում են live միջավայր (80 ԳԲ տարածք)՝ կայքի կայունության և անվտանգ աշխատանքի երաշխավորման համար: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Pre-live միջավայրի համար ևս պետք է տրամադրվի նույնքան տարածք: Անհրաժեշտ է ապահովել, որ կայքի նվազագույն մուտքերը յուրաքանչյուր ամսվա համար լինեն անհատական 4000 և կրկնվող առավելագույնը 8000 այցելու: Անհրաժեշտ է ապահովել բարձր կատարողականություն, որպեսզի անխափան աշխատի կայքի գլխավոր որոնման համակարգը և մրցույթներ բաժնի անհատական որոնման ենթաֆիլտրացված համակարգը: Պաշտոնական կայքէջում պետք է ապահովվի ամբողջ բովանդակության մեջ որոնման հնարավորություն՝ ներառյալ տեքստային նյութերն ու էլեկտրոնային ֆայլերի անվանումները (PDF, DOC, XLS և այլն)՝ անկախ կայքէջի կառուցվածքից: Անհրաժեշտ է կիրառել Redis Object Cache կամ Memcached Object Cache, առանձնացված հարցումների համար: Նկատի ունենալով կայքի ծավալային և կառուցվածքային ահռելիությունը, անհրաժեշտ է նկատի ունենալ որոնողական համակարգերի ինդեքսավորումը և, ըստ այդմ, հաշվի առնել ինդեքսավորման պարբերական հարցումները, այդ թվում ապագայում լրացուցիչ այլ API-ներից դեպի կայք ստացվող տեղեկատվության հարցումները: SQL Injection, XSS, CSRF պաշտպանվածության ապահովում, health checks ՝ PHP-FPM, Redis, MySQL, ծառայությունների համար, անվտանգության գլխագրերի ապահովում և					

			աշխատանքների ընթացքում ի հայտ եկած այլ անվտանգության միջոցառումների ապահովում: Անհրաժեշտ է կիրառել Վեբ միջցանցային էկրան (Web Application Firewall-WAF)՝ կայքը պաշտպանելու այնպիսի վեբ հավելվածների հարձակումներից, ինչպիսիք են օրինակ՝ էսՔյուէլ-ը (Structured Query Language-SQL), էքսէսէս-ը (Cross Site Scripting-XSS): Սերվերային միջավայրը կարգավորվում է համաձայն «Հենակետ» նախագծման համակարգի պահանջների: Պահանջների հիմնական դրույթներն են բարձր բեռնման արագության ապահովում, տվյալների ամբողջականության և օգտագործողի անվտանգության պահպանում և օպտիմալ բեռնվածության կառավարում և ճկուն ինֆրաստրուկտուրա: Ապահովվող լրացուցիչ հնարավորություններ տեխնիկական մշտադիտարկում (uptime monitoring, error tracking), անվտանգության պարբերական ստուգումներ և թարմացումներ, տվյալների կրկնօրինակման ավտոմատ և ըստ պահանջի ընթացակարգեր և սերվերի օպտիմիզացիոն և արագության բարձրացման պլանավորված աշխատանքներ:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
Ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայության
գլխավոր քարտուղար
Տ. Իգիթյան

_____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Էլիքս» ՍՊԸ
ք.Արտաշատ Մարքսի 7ա
«ԱմերիաԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570078901950200
ՀՎՀՀ՝04235445
Գործադիր տնօրեն
Ջ.Սևոյան

_____
(ստորագրություն)

Հավելված N 2
«31» «03» 2026թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-26/10 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
Չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ.-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում**				
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	ընդամենը
1	72211124/1	Պաշտոնական կայքի ծրագրային մշակման և սպասարկման ծառայություններ	-	120000	240000	360000	360000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
***Սույն վճարման ժամանակացույցը կազմված է 2026թ.-ի համար, յուրաքանչյուր հաջորդող տարվա համար վճարման ժամանակացույցը կհաստատվի համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման դեպքում:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
Ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայության
գլխավոր քարտուղար
Տ. Իգիթյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Էլիքս» ՍՊԸ
ք.Արտաշատ Մարքսի 7ա
«ԱմերիաԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570078901950200
ՀՎՀՀ՝04235445
Գործադիր տնօրեն
Ջ.Սևոյան

(ստորագրություն)

Հավելված 3
« 31 » « 03 » 2026թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-26/10 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2023 թ.
Պայմանագրի համարը՝
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«31» «03» 2026թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-26/10 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն